

ՋՐՎԵԺԻ ԾՈՎԻ ՎՐԱ

Աշխարհին հայտնի բոլոր մեծ ու փոքր ջրավեժները գտնվում են գետերի վրա: Սակայն Սովետական Միությունում գտնվող ջրավեժներից մեկը խախտել է այդ կարգը: Դա Կասպից ծովը Կարա-Քոզազ-Գյուլ ծոցին միացնող նեղուցում առաջացած աշխարհում միակ ծովային ջրվեժն է:

Այստեղ ամեն ինչ անսովոր է: Հենց այդ անսովորությունն էլ վաղուց ի վեր գրավել է գիտնականների ու նախապահորդների ուշադրությունը: Այն ժամանակ նրանց հետաքրքրել է միայն նեղուցն ու խորհրդավոր «մեղույալ» ծոցը: Իսկ վերջին տասնամյակում բնությունը այստեղ ստեղծեց արտասովոր ծովային մի ջրվեժ՝ յուրահատուկ գեոտարբանով:

Բնության այդ մահաճ փոփոխություններն այնքան արագ են կատարվում, որ գրեթե չեն հասցնում այս մասին պատմել հետաքրքրասերներին:

Նեղուցի երկարությունը հաճախակի փոփոխվում է ենթարկվում: Փոխվում են նաև նրա լայնությունն ու խորությունը, բոտ այդմ էլ՝ ծոցի ջրի մակարդակը: 1930 թվականին ծովի ու ծոցի մակարդակների տարբերությունը կազմում էր 0,5 մ, նեղուցը բավական լայն էր և ծոցի մեջ համեմատաբար շատ ջուր էր բափվում: Այժմ մակարդակների տարբերությունը դարձել է համարյա 6 մետր, որի հետևանքով հոսանքի արագությունը կրկնապատկվել է, որոշ տեղերում հասնելով վայրկյանում 3—4 մետրի: Այդ «ծովային գետից» բացի ուրիշ ոչ մի գետ չի բափվում Կարա-Քոզազ-Գյուլը: Շուրջն առաջին հայացքից անկյանքով թվացող բարձրավանդակն է ու անապատը:

Դեռ շատ վաղուց, բոլոր բուրմենների ուշադրությունն է գրավել ջրի այդ մշտական հզոր հոսքը, բայց անը, չբացատրվող երևույթի նշիչ ուժը միշտ ետ է պահել նրանց այդ շրջանում նավարկելու մտքից:

Այստեղ էլ ծնունդ է առել լեգենդը «ամենափուլ, սև երախի»՝ Կարա-Քոզազ-Գյուլի մասին, որ կորչում են Կասպիականի կենտրոն ջրերը: Սակայն առեղծվածային ոչինչ չկա: Բանը նրանումն է, որ անապատով շրջապատված Կարա-Քոզազ-Գյուլի գրաված դիրքը, այդ շրջանում իշխող չափազանց չոր արևելյան խորշակները,

ամառային ամիսների բարձր ջերմաստիճանը—այս բոլորը նպաստում են ծովածոցի մակերևույթի այնպիսի արտակարգ արագ և ուժեղ գոլորշիացմանը, որ ծովի ջուրը չի հասցնում լրացնել կորուստը և ծովի ու ծոցի տարբերությունը աստիճանաբար աճում է:

Անա քն ուր են կորչում Կասպիականի ջրերը:

Անա քն որտեղ է քաֆնված ծովային ջրվեժը առաջացման հիմնական պատճառներից մեկը:

Ծովային ջրի վիթխարի հոսքը ողողելով ամուր ավազաքարերից և հնազույն կրաքարերից կազմված աստիճանը 5 մետր բարձրությունից շառաշյունով զահավիժում է Կարա-Քոզազի մեջ:

Քարե աստիճանի առաջացումը բացատրվում է նրանով, որ ջուրը հաղթահարելով ամուր ավաքները ողողում է հատակի բուլլ գոունը դրանց ստորոտում և շարունակ խորացնում իր հունը:

Աշխարհում այդ միակ ծովային ջրվեժը, նաև ամենաաղին է: Ամեն տարի ծոցի փառ աստիճանով Գյուլն է քափվում 100 միլիարդ դեկալիտր ջուր, որն իր մեջ պարունակում է 130 մլն տոննա աղ: Ջրի արագ գոլորշիացման հետևանքով աղի մի մասը հաստ շերտով նոստում է ջրի հատակին, իսկ մյուսը՝ մնում է լուծված վիճակում: Կարա-Քոզազ-Գյուլը աղի արտադրության մի հսկայական բնական ֆաբրիկա է:

Կենդանական աշխարհը խուսափում է Կարա-Քոզազ-Գյուլում ապրելուց, բայց մարդկանց այն նրապուրում է զրաուրեւյան, կենակրի և այլ աղբերի հսկայական, անսպառ պաշարներով:

Ծովածոցի մոտ հոսանքը լայնանում, հասնում է 1—1,5 կմ-ի՝ առաջացնելով դեղատա: Այդ մասում, բունդ աղաբի մեջ ոչնչանում են ոչ միայն ձկները, այլև ծովային փափկամորթները: Նրանց կմախքները և խեցիկները խառնվում են ավազի և աղի ամրացած կտորների նետ՝ առաջացնելով ծանծաղուտներ, կղզյակներ, նոր ավեր:

Հրապուրիչ է ծովի վրա առաջացած այդ նորաստեղծ գեղեցիկ ջրվեժը: Անապատի բոլոր ծայրերից այստեղ են շտապում զազաններ և բոլորները: Գետաբերանը հյուսիսից տանտիրոջ նման առատ սեզան է բացում այցելուների առաջ:

Կարա-Քողազ-Գյուլի շրջակայում ոչ եղնիկը և ոչ էլ նապաստակը ոչ մի տեղ չուր շեն զբոսնի իրենց ծառավր հագեցնելու համար: Քայց աննպատի արագավազ բնակիչների համար դատարկ բան է մի գիշերում 100—150 կմ կտրելը, որպեսզի խմեն ջրվեժի քեկուզ աղի ջուրը, հանգստանան և առավոտյան կրկին վերադառնան անապատ: Այստեղ են շտապում աղվեսները, փի շարտված ձկներ «որսալու», գայլերն

են քափառում եղնիկներին հետամտելով: Ժայռների ելուստներին քառած հսկայական արծիվները ուղադիր հետևում են Կարա-Քողազ-Գյուլի շրջակայի իրադարձություններին: Օդը լցված է որոհների անլուսի աղմուկով:

Անա այդպիսին է «Սև երախը» ուր այժմ աշխատում են գիտական արշավախմբեր, ուսումնասիրում անսովոր շրջանը՝ մարդուն ծանայեցնելու նպատակով:

Լ Ո Ղ Ա Ց Ո Ղ Թ ՈՒ Ն Ե Լ

Ներկայումս Խտալիայում կառուցվում է այսպես կոչված արևային «ավտոստորադա», որը պետք է անցնի ամբողջ Ապենինյան քերակղզով՝ հյուսիսից-հարավ: Նրա վերջին հատվածը պետք է դառնա Մեսինյան նեղուցը: Անա արդեն 100 տարի է. ինչ Խտալիայում առաջ են փառվում Ապենինյան քերակղզին Սիցիլիայի հետ միացնելու նախագծեր: Սակայն շինարարության և ինժեներական կառուցումների ոչ մի տրադիցիոն մեքոդ չէր կարող լինել տեխնիկական նախագծի նիմք: Նեղուցի 3 կմ-անոց լայնությունը, մոտերում գտնվող էտնայի հրաբուխը, արտակարգ ուժեղ ծովային հոսանքը, զառիթափ փսիերն ու նեղուցի համեմատաբար մեծ խորությունը (100—200 մ) մեծ դժվարություններ էին, որոնք պետք է հաղթահարվեին:

Այժմ մշակվել է Սիցիլիան Ապենինյան քերակղզու հետ միացնելու միանգամայն ժամանակակից նախագիծ, ըստ որի 32 մ խորության վրա պետք է գտնվի մի լողացող բունել: Զրի նըշման ուժին պետք է ընդդիմանան պողպատյա նոսրանները, որոնք ամրացվելու են ծովի հատակին: Կախովի նոսրանները նախատեսված է տեղադրել յուրաքանչյուր 10 մետրի, իսկ կողայինները՝ 50 մետրի վրա:

Լողացող բունելի ամբողջ երկարությունը կհազմի 3200 մետր: Նրա մեջ երկու տարբեր մակարդակների վրա կըկա-

ռուցվեն երկու ճանապարհ: Մեկը մյուսի վրա գտնվող այդ ճանապարհներից յուրաքանչյուրը կունենա 7 մ լայնություն: Թունելի ներքին տրամագիծը կհազմի 13,6 մ, իսկ արտաքինը՝ 15,9 մ: Թունելի խողովակը կպատրաստվի երկաթբետոնեց: Նրա տեղադրումը 32 մետր խորության վրա նախատեսված է նեղուցում նավերի միանգամայն ազատ լողը ապահովելու նպատակով: Նույնիսկ ամենաուժեղ փոթորիկի ժամանակ բունելը կզբոնրվի ծովային ակիների ազդեցության շառավղից ցած: Նկարագրված նախագծի իրականացումը տեխնիկական առանձնապես մեծ դժվարությունների չի հանդիպի: Այդ բնագավառում արդեն արված են մի շարք փորձեր: Այսպես, վերջին տարիներս ԱՄՆ-ում մի քանի անգամ կատարվել է հավաքովի երկաթբետոնե մեծ շափերի խողովակների ստորջրյա մոնտաժում: Համանման աշխատանքներ կատարվել են նաև Ճապոնիայում:

Մեսինյան նեղուցում քերակղզին Սիցիլիայի հետ միացնելու լողացող բունելի նախագիծը մինչև այժմ բնարկված նախագծերից ամենաէժեմն է: Տրադիցիոն նախագիծը (կամուրջ), նույնիսկ իր ամենաէժեմ վարիանտի դեպքում, կազմում է 100 միլիարդ լիր, մինչդեռ լողակցող բունելի կառուցման ծախսը կհազմի «միայն» 21 միլիարդ լիր: